



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ  
ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՔՐԻՍՏՈՍԱԿԱՆԴ ՍԻՐՈՑ ՈՂՋՈՐՑՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ  
ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԵԼԻԿԻՈՑ Տ. Տ. ԽՈՐԵՆԱՅ ԱՌԱՋՆՈՑ,  
ՊԱՏՐԻԱՐԹԻՆ ՀԱՅՈՑ ՍՐԲՈՑ ԵՐՈՒՍԱՂԵՄԱՅ Տ. ԵՂԻՇԷԻ ԱՐԶԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ,  
ՊԱՏՐԻԱՐԹԻՆ ՀԱՅՈՑ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՑ Տ. ՇՆՈՐՀՔԱՅ ԱՐԶԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ,  
ՀԱՄՕՐԷՆ ԱՐԶԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ՎԱՐԴԱՊԵՏԱՅ, ԶԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ  
ՍԱՐԿԱԿԱՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ԹԱՂԱԿԱՆ  
ԽՈՐՀՐԴՈՑ ԵՒ ՊԱՇՏՏՈՆԷԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՑ ՍՐԲՈՑ  
ԵՒ ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ ՀԱՒԱՏԱՅԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

Արարիչն Աստուած, երբ ժամանակները լրացան, երկիր առաքեց Իր Միածին Որդին, Փրկիչը մեր, որպէսզի սիրոյ և խաղաղութեան Իր պատգամը, նոր ուխտով մը վերստին աւետուի աշխարհին, և մարդիկ ապրին ու գործեն սիրով միաբան, իբրև Եղբայրներ հարապատ, իբրև հաւասար ու ազատ վաւակները միևնոյն երկնային Հօր: Նոր Ուխտի վէմին վրայ, Զրիստոս և Իր աշակերտները հիմնեցին Ս. Եկեղեցին, «*Ձի յայտնեսցի անդ իշխանութեանց և պետութեանց, որ յերկինս են, ի ձեռն Եկեղեցւոյ՝ բազմապատիկ իմաստութիւնն Աստուծոյ, ըստ յառաջադրութեանցն, զոր աբար ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Զրիստոսի*» (Եփես. Գ. 10—11):

Բոլոր մարդիկ, որոնք կը դաւանին միևնոյն Աստուածը որպէս Արարիչը ու Նախախնամող Հայրը տիեզերքի, որոնք կը դաւանին Վրիստոս որպէս մարմին առած խօսքը Աստուծոյ և Փրկիչը ազգի մարդկան, որոնք կը դաւանին ի Հօրէ բխեալ Ս. Հոգին որպէս միաբարիչ և աստուածային շնորհները բաշխող լոյս պօրութիւն, անդամներն են Զրիստոսի Եկեղեցիին: Բոլոր քրիստոնեաները, իրենց մկրտութեամբ, իրենց հաւատքով ու փրկութեան յոյսով, միացած են Զրիստոսի խորհրդաւոր Մարմնոյն Մէջ, որ Ս. Եկեղեցին է՝ մէկ, ընդհանրական, առաքելական և սուրբ, իբրև միակ Գլուխ ունենալով Վինքը՝ մեր Տէրը և Փրկիչը Յիսուս, ի սկզբանէ, այժմ և յաւիտեան:

Զրիստոնէութիւնը իր ետին ունի երկու հազար տարիներու պատմութիւն մը, որու ընթացքին մարդկային պայմանին յատուկ երևոյթներ ու պատմականօրէն սկիզբ առած ու վարձագած իրադրութիւններ, ծնունդ տուած են մեզի ծանօթ քրիստոնեայ

պատմական եկեղեցիներուն, որոնց ամբողջութիւնը կը կազմէ Զրիստոսի Ընդհան-  
րական Եկեղեցին:

Եկեղեցին, իբրև աստուածային նախախնամութեան գործ, անշուշտ մէկ է և  
տիեզերական, սակայն այդ աստուածային տնօրինութեան իրագործումը երկրի վրայ  
զգեցած է և կը զգենու արտաքին տարբեր տարազներ, համաձայն ժողովուրդներու  
հոգեկան դիմագծութեան և Աստուծոյ խօսքը ընկալելու և ապրելու կերպին, և հա-  
մաձայն պատմական իրադրութեանց ու ամանդութիւններուն, որոնց մէջ նաեւ ու  
աճած են եկեղեցիները:

Այս երկու հազար տարիներու ընթացքին, քրիստոնէութիւնը, եկեղեցիները յա-  
ճախ կուրծք տուած են արտաքին ալեկոծումներու և ներքին հակամարտութիւններու  
և պառակտումներու, և երբեմն նոյնիսկ թշնամական փոխադարձ գործողութիւննե-  
րու, սակայն, Աստուծոյ ողորմութեամբ, անոնք կարողացած են հասնիլ խաղաղու-  
թեան ափին, շարունակելով իրենց սրբական առաքելութիւնը, ամէն մէկը իրեն սահ-  
մանուած հոտին մէջ:

Մեր օրերուն, փա՛ռք Ամենակալին, այլևս չկան ոչ-բարեկամական դրսևորում-  
ներ եկեղեցիներու միջև: Այլևս ոչ ոք չի մտածեր հին վէճերու և հակառակութիւն-  
ներու մասին: Այսօր բոլոր եկեղեցիները, բոլոր քրիստոնէաները կը խօսին փոխա-  
դարձ հաճութեան մասին, գործակցութեան մասին, միութեան մասին:

Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցին, դաւանաբանական հարցերու  
նկատմամբ իր մտածելակերպով ու բանաձևումներով թէև կը մնայ անշեղ ու հաս-  
տատ իր աւանդական ուղղափառ դիրքերուն վրայ, սակայն, ինչպէս անցեալի մէջ,  
այսօր ալ կ'առաջնորդուի «Միութիւն ի կարևորս և ազատութիւն յերկբայականս»  
հին ու բարերար սկզբունքով: Ուրեմն, յոյժ ցանկալի է, որ քոյր եկեղեցիներու հետ  
մենք շարունակենք պահպանել ու մշակել իրաւ քրիստոնէական եղբայրական կա-  
պեր, մեր Մայր Եկեղեցւոյ և մեր լուսաբնակ հայրապետներու ոգիով, եկեղեցիներու  
միջև միութիւնը տեսնելով ի Զրիստոս սիրոյ մէջ, փոխադարձ ճանաչման ու զնա-  
հատման մէջ, սերտ գործակցութեան մէջ:

Դաւանաբանական, քրիստոսաբանական կամ այլ խնդիրներ այլևս արգելք չեն  
և ոչ ալ պայման՝ եկեղեցիներու սիրալիր յարաբերութեանց ու եղբայրական գոր-  
ծակցութեանց: Դաւանաբանական դիրքերու վերաբնութեան ու միակերպումի ճա-  
նապարհով միութեանական փորձերը տակաւին կանխահաս են: Այսօր նման փորձեր  
կրնան դուռ բանալ նոր վէճերու, նոր անհասկացողութիւններու և իրերամերձ  
դրսևորումներու: Յիշենք, որ անցեալի մէջ յաճախ, միութեան մասին մարդոց տեսա-  
կէտներն են եղած քրիստոնէական ճշմարիտ սիրոյ և միութեան ոգին խափանողը:

Վերաքննել ու փոփոխել տասնեակ մը և աւելի դարերու հոլովոյթով հաստա-  
տուած կանոններ ու դաւանաբանական բանաձևեր, նուիրագործուած աւանդութիւն-  
ներ ու ծիսական կերպեր, վստահօրէն շփոթութիւն և դժգոհութիւն պիտի լառա-  
ջացնէ հաւատացեալ ժողովուրդի գիտակցութեան մէջ, և տկարացում սիրոյ և հա-  
ւատարմութեան՝ դէպի Մայր Եկեղեցին, և հետևաբար քրիստոնէական հաւատքի  
տկարացում ժողովուրդի հոգեբանութեան մէջ, ի մասնաւորի ազգային եկեղեցիներու  
պարագային:

Մեր Եկեղեցւոյ ծագման, կազմաւորման ու վարձագման պատմութեան ու  
աւանդութիւններուն և մեր ժողովուրդին յատուկ՝ կրօնական ապրումներու դրսևոր-  
ման կերպերուն մէջ մենք կը գտնենք մեր Ազգային Եկեղեցիին քրիստոնէական  
հարապատութիւնը և վաւերականութիւնը:

Ազգի մը բազմադարեան կեանքի փորձով մարմին առած ու կեանքի ձև ստա-  
ցած աւանդութիւնները, հոգեբանութիւնը և աստուածաբանական մտածելակերպը  
չատ աւելի պօրաւոր են ու վաւերական, քան տեսական մեկնութիւնները, ինչքան  
ալ տրամաբանական թուին անոնք վերացական մտածումի առջև:

Հայ Եկեղեցին չի կրնար անտեսել նաև իր գոյութեան ու իր առաքելութեան  
ազգային նկարագիրը: Մանաւանդ ի սփիւռս աշխարհի ցրուած հայ ժողովուրդի  
համար, Հայ Եկեղեցին իր ինքնուրոյն դաւանաբանութեամբ, աւանդութիւններով, իր  
ազգային լեզուով ու ծէսերով, իր անկախ ու ժողովրդապետական կազմակերպու-  
թեամբ, ազգապահպանման հզօր ազդակ և ինքնապաշտպանութեան ամուր վահան  
կը հանդիսանայ այսօր, երբ մեր ժողովուրդի աւելի քան կէսը և մեր նուիրապետա-  
կան պատմական Աթոռներու չորսէն երեքը կը գտնուին Մայր Հայրենիքի սահման-  
ներէն դուրս:

Հետևաբար, եկեղեցիներու միութիւնը Մենք կ'ըզմանք իրականացած տեսնել հաւատալով, թէ Զրիստոսով և Ս. Աւետարանով մէկ է Եկեղեցին, և թէ պատմական աւելային եկեղեցիներու գոյութիւնը, այնպէս ինչպէս անոնք կան այսօր, չի հակասեր և չի ժխտեր Զրիստոսով մէկութիւնը Ընդհանրական Եկեղեցիին:

Մեր օրերուն, եկեղեցիներու միութեան գաղափարը և առաջադրանքը պէտք է բանաձևել իբրև միութիւն մը Զրիստոսի սիրոյն մէջ, եղբայրական յարաբերութեանց մշակումով ու սերտ գործակցութեամբ, փոխադարձ հանդուրժողութեան, յարգանքի ու հաւասարութեան պայմաններու մէջ, ամէն Եկեղեցի պահելով իր դաւանաբանական մտածելակերպը, իր աւանդութիւնները և իր ինքնագլուխ անկախ ղեկավարութիւնը:

Եկեղեցիներու միութեան գաղափարը, մեր դարաշրջանին համար, օգտակար ձևով և բաւարար չափով իրագործուած է Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդի շարժման հիմնական սկզբունքներով, որոնք բանաձևուեցան 1961-ին, Դելիի համագումարին: Ամէնքս հոգեպէս միտքարուած ըլլալու ենք, եթէ աշխարհի բոլոր քրիստոնէայ եկեղեցիները, առանց խտրութեան, անկեղծօրէն միանան և հաւասար հեղինակութեամբ եղբայրաբար գործակցին, մեր օրերուն՝ քրիստոնէայ եկեղեցիները և համայն շարժումները յուզող կենսական հարցերու լուծման ճանապարհին: Եթէ մեր սերունդը այդ իրականացնէ, արդէն պատմական մեծ յաջողութիւն մը արձանագրած պիտի ըլլայ Զրիստոսի մի և Ընդհանրական Ս. Եկեղեցին:

Եւ Մենք տակաւին կը հաւատանք, թէ պատմական եկեղեցիներու միջև գոյութիւն ունեցող աստուածաբանական մտածելակերպի, վարդապետական մեկնաբանութեանց, պատմական աւանդութեանց և ծիսական ձևերու բոլոր այն տարբերութիւնները, որոնք անցեալի մէջ հանդիսացած են պատճառներ հակամարտութեանց ու թշնամութեանց, մեր օրերու կեանքի պայմաններու տակ, մեր արդիական մտայնութեան ու հոգեբանութեան մէջ, ուրկէ չբացած են և պէտք է չբանան ալլես մոլեռանդութիւնը և անհանդուրժող ոգին, բոլոր այդ տարբերութիւնները ու անոնց պահպանումը պէտք է նկատուին անհասկացողութեանց և իրերամերժութեանց պատճառներ, այլ, ընդհակառակը, զանոնք պէտք է նկատել մերձեցման և փոխադարձ գնահատութեան ազդակներ, որովհետև անոնք բոլորը, դարերու հոլովոյթով, բիրեղացումներն են եկեղեցական ներշնչուած հայրերու և հաւատաւոր ժողովուրդներու վաւերական քրիստոնէական ապրումներուն և ստեղծարար ճիգերուն: Այդ բոլորի անփոփոխ ու անալլալ պահպանումով, Զրիստոսի Եկեղեցին կը դառնայ առաւել ամբողջական, առաւել հարուստ և առաւել գեղահիւս, վասնզի անոնք արտայայտութիւններն են աստուածային յայտնութիւններուն և ճշմարտութիւններուն, աշխարհի քրիստոնէայ ժողովուրդներու բազմադարեան կրօնական փորձով առարկայացած:

Բոլոր պատմական եկեղեցիներու իմացութեան, ներշնչումի և ապրումի բիրեղացած, առարկայացած այդ արտայայտութիւնները կը կապմեն այն համաքրիստոնէական, տիեզերական զանձարանը, որ իր ամբողջութեամբ միայն, իր ալլապանութեամբ ու բազմերանգութեամբ, նոյնիսկ երբեմն իր հակասութիւններով, կ'արտացոլէ լիութեամբ տիեզերքը Աստուծոյ խօսքին և կը ճառագայթէ փառքը Զրիստոսին, մտածումի տարբեր ձևերով, զգացումի տարբեր երանգներով, տարբեր լեզուներով, տարբեր դաշնաւորումներով:

Պատմականօրէն վարձացած ամէն Զրիստոնէական Եկեղեցի իր սուրբերով, իր դաւանութեամբ, իր աւանդութիւններով, իր գրականութեամբ և իր արուեստով, ուրոյն և անկրկնելի ապրող յուշարձան մըն է, կենդանի խօսք մըն է, վաւերական վկայութիւն մըն է՝ «վասն մեծի փառացն Աստուծոյ»:

Պէտք է սրբութեամբ պահել, պահպանել զանոնք ամբողջ, անխառն ու անալլալ, առանց յովտ մը իսկ աւելցնելու կամ պակսեցնելու: Պէտք է աղքատացնել, պէտք է տկարացնել, պէտք է գունաւերծել Զրիստոսի Եկեղեցին:

Ինչքա՞ն իրաւաւետարանական հոգի կայ, ինչքա՞ն մարդկային ճշմարտութիւն և ինչքա՞ն ողջմտութիւն՝ մեր երանաշնորհ Նորիմեան Հայրիկի բոլորիս ծանօթ այն պարզ ու վճիտ պատկերին մէջ, որով քրիստոնէական եկեղեցիները կը նմանցնէր մեծ ծաղկեփունջի մը, ուր ամէն մէկ ծաղիկ իր ուրոյն գոյնը ունի, իր ուրոյն երանգը և իր ուրոյն բոյրը, բոյրը մէկտեղուած Զրիստոսի սիրոյ կապով:

Այսօր, եթէ կայ բան մը, որ մենք՝ քրիստոնէաներս և աշխարհի եկեղեցիները պէտք է իրօք փնտռենք՝ այդ Զրիստոսի սէրն է:

Աղօթենք, որ Տէրը իր սիրով տիեզերքէն լոյս իջեցնէ մեր հոգիներէն ներս ու շողացնէ վայն մեր կեանքին ու մեր ձեռաց գործերուն մէջ, որպէսզի բոլորս, աշխարհի բոլոր քրիստոնեաներս, սորվինք ընթանալ ճշմարիտ սիրով, խաղաղութեան և եղբայրական համագործակցութեան ճանապարհէն. «Զի սէր յԱստուծոյ է» և «Աստուծո՞ւ սէր է» (Ա Յովն. Դ 7, 9):

Այս սիրով շունչով, Յիսուս և իր առաքեալները Եկեղեցին հիմնեցին: Այս սիրով շունչով միայն քրիստոնեաները, եկեղեցիները բոլոր կը միանան Բրիստոսի մէկ և Ընդհանրական Եկեղեցիին մէջ:

Այս սիրով շունչով, եկեղեցիներ ու հաւատացեալներ այսուհետև ոչ են «օտարք և պանդուխտք, այլ քաղաքակիցք սրբոց և ընտանիք Աստուծոյ, շինեալք ի վերայ հիման առաքելոց և մարգարէից, որոյ է գլուխ անկեալն Բրիստոս Յիսուս (Եփես. Բ 19—20):

Սոյն Մեր հայրապետական կոնդակով, կը խորհինք. կարողացանք արտայայտիչը ըլլալ և յստակել Հայաստանեայց Եկեղեցւոյ և հայ հաւատացեալ ժողովուրդի պգացումը, եկեղեցիներու ցանկալի միութեան գաղափարին վերաբերեալ, որով և կը յորդորենք և կը հրաւիրենք զձեզ, սիրելի՛ք Մեր, բանիւ և գործով ընթանալ մեր լուսաբնակ նախնեաց մեզի աւանդ թողած ճանապարհէն, անշեղ ու անսասան պահելով մեր Առաքելական ու Ազգային Ս. Եկեղեցին, և անկեղծօրէն, խնդութեամբ գործել, իրականացած տեսնելու համար բոլոր քրիստոնեայ եկեղեցիներու միութիւնն ու եղբայրութիւնը Բրիստոսի կենարար սիրով:

«Յիշեցէք զառաջնորդս ձեր որ խօսեցան ձեզ զբանն Աստուծոյ. հայեցեալք յելս գնացից նոցա՝ նմանողք եղերուք հաւատոցն» (Եբր. ԺԳ 7):

Սէ՛ր և խաղաղութի՛ւն և միութի՛ւն եկեղեցեաց քրիստոնէից:

Սէ՛ր և խաղաղութի՛ւն և միութի՛ւն Հայաստանեայց Եկեղեցւոյս, այժմ և յաւիտեան:

Ողորմութիւն Աստուծոյ և շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Բրիստոսի եղիցին ընդ ձեզ:

Ամէն:

Վ Ա Զ Գ Ե Ն Ա

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 4-ն յունիսի

1965 Փրկչական ամի.

և ի տումարիս Հայոց ՌՆԺՌ,

ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի

